

պահելու համար գլխաւոր փաստ կը գործածէր կաթողիկոսական իրաւասութեանց տեսակէտը, և Մայր Աթոռին գերազանցութեան վրայ կը յենուէր: Իբր էջմիածինի նուիրակ՝ իր նախապատուութիւնը և Ղազարի՝ իբր Սիսէն ձեռնադրեալ, Պոլսոյ պատրիարք ըլլալու իրաւունքը կը թխտէր: Սակայն ինքն ալ հաւատարիմ նուիրակ մը եղած չէր. քանի որ էջմիածինի հասոյթները իր անձնական նպատակներուն ծախսած էր:

Յովհաննէս Թիւթիւնճի, որպէսզի այս մասին հանրութեան մէջ շրջող զրոյցները դադրեցնէ, կը խոստովանէր այդ հասոյթներուն իւրացումը, բայց կը խոստանար պատրիարքական հասոյթներով էջմիածինի գումարները վճարել և երաշխաւոր ցոյց կուտար Խոսրով և Միրզա՝ Արեւելցի իշխանաւորները, Նախիջեւանի Զահուկ գիւղէն (Զախարիա Սարկաւազ, Բ. հտ. էջ 72): Նոյնը կը հաստատէին նաև Թըրթըրեանք, որպէսզի ձեռքէ չհանեն իրենց կուսակից պատրիարքը:

Այս նպատակով երաշխաւորագիր մըն ալ պատրաստեցին Յակոբ Զուզայեցի կաթողիկոսին զրկելու համար, ինչպէս նաև հանրագրութիւն մը, զոր կրնաքեցին Միրզա և Խոսրով, բայց զայն չուզեցին ստորագրել բնիկ Հայոց երեւելիները, որովհետև Յովհաննէս Թիւթիւնճի Թըրթըրեաններու մարզն էր, և ա՛լ ձանձրացած էին Թըրթըրեաններէն: Միրզա և Խոսրով ուրիշ աննշան բնիկներու ստորագրել տուին այդ գիրերը, որոնք ուղղուած էին Յակոբ կաթողիկոսին, որմէ կը խնդրէին նաև հայրապետական կոնդակ մը, Յովհաննէսի պատրիարքութիւնը հաստատող:

Այս բոլոր գիրերը ճամբայ հանեցին Մինաս վրդ. Արեւելցիի և աշխարհականի մը ձեռքով: Սա-